

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ**

**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲՄԾՁԲ-20-4/3-4**

բ. Երևան

«13» 03 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յուլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆլեշ-Մոտորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Լալայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 13000000 (տասներեք միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝

**ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxԶ**, որտեղ՝

**ՎԳ-ն** պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է:

**ՄԳ-ն** ընտրված մասնակցի առաջարկված հանրագումարային գինն է.

23-րդ չափաբաժնի համար՝ 5,640,000 ՀՀ դրամ,

26-րդ չափաբաժնի համար՝ 7,080,000 ՀՀ դրամ,

**ՆԳ-ն** ծառայության մատուցման համար սահմանված միավոր գների հանրագումարն է.

23-րդ չափաբաժնի համար՝ 7,332,400 ՀՀ դրամ,

26-րդ չափաբաժնի համար՝ 11,138,707 ՀՀ դրամ,

**Ծ-ն** մատուցված ծառայության միավորի գինն է.

**Զ-ն** մատուցված ծառայության քանակն է:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով<sup>1</sup>: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց

<sup>1</sup> Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 28 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը

ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:<sup>2</sup>

7.14 Սույն պայմանագրով նախատեսված<sup>2</sup> Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՁՈՒ սպառազինության վարչությունը:


#### 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

##### ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն  
ՀՀ, ք. Երևան Բագրևանդի 5  
ՀՀ ՖՆ Ա գործառնական վարչություն  
Հ/հ 900011144079  
ՀՎՀՀ 02522157


ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

տնօրեն

  
Ն. ԅՈՒԶՅԱՆ

##### ՎԱՃԱՌՈՂ

«Ֆլեշ-Մոտորս» ՍՊԸ  
ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 31  
«Արարատբանկ» ԲԲԸ  
Հ/Հ 1510012745550100  
ՀՎՀՀ 00873228

  
Ա. ԼԱԼԱՅԱՆ

<sup>2</sup>Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***  
**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

- Կատարողի կողմից պետք է տրվի երաշխիք փոխարինված պահեստամասերի համար 6 ամիս կամ 10000կմ:
- Հիմնական նորոգում անցած ագրեգատների(շարժիչ,փոխանցումների տուփ, բաժանարար տուփ,կամրջակներ) շահագործման երաշխիքային ժամկետը՝ 12 ամիս կամ 50000 կմ:
- Ծառայությունը մատուցվում է ըստ հայտերի: Հայտի թույլտվությունը ՀՀ ՁՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայության կողմից էլեկտրոնային տարբերակով տրվում է ծառայությունը մատուցողին:  
Առանձին դեպքերում ՀՀ ՁՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայության կողմից կարող է տրվել բանավոր թույլտվություն , որը պետք է հետագայում ձևակերպել գրավոր ձևով: Մինչև սպասարկելն ու նորոգելը ծառայությունը մատուցողի և 14746 զորամասի ներկայացուցչի կողմից կազմել արատավորման նախնական զենման ակտ կազմակերպության տնօրենի, վարորդի, ՀՀ ՊՆ 14746 զորամասի ներկայացուցչի և ՀՀ ՊՆ 14746 զորամասի հրամանատարի ստորագրությամբ և կնիքով, որից հետո երեք օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ ՁՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայություն:
- Ծառայությունը պետք է մատուցվի (մեքենան նորոգվի)մեքենան նորոգման հանձնելու պահից 7 օր ներառյալ արատավորման աշխատանքները, որից հետո կազմել կատարողական ակտ վերոնշյալ անձանց ստորագրություններով, կնիքով և ներկայացնել ՀՀ ՁՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայություն: Զորքերից նորոգման ենթակա տեխնիկայի փաստաթղթերը ստորագրվում է նաև զորքերի ներկայացուցչի կողմից:
- Ծառայության մատուցման ընթացքում օգտագործվող բոլոր տեսակի պահեստամասերի, քսայուղերի, ներկերի և այլ նյութերի ապահովումն իրականացվում է ծառայությունը մատուցողի կողմից:
- Միներալ յուղի շահագործման նվազագույն վազքը ոչ պակաս 6000 կմ.
- Սինթետիկ յուղի շահագործման նվազագույն վազքը ոչ պակաս 10000 կմ.
- Կիսասինթետիկ յուղի շահագործման նվազագույն վազքը ոչ պակաս 8000 կմ.
- Փոխարինված ագրեգատները և պահեստամասերը պետք է հանձնվեն ՀՀ ՊՆ 14746 զորամաս (ընդունումը և տեղափոխումը զորամասի ուժերով):

**ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**


Ծառայության				
Հ/Հ	Ձ/հ	անվանումը	Ընդհանուր առավելագույն գումարը (ՀՀ դրամ)	Մատուցման ժամանակացույց
1	23	ՈՒԱՁ-31512 Լմողիֆիկացյաները	5000000	Ծառայությունների մատուցումը կիրականացվի 2020թ. համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետում՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի /ո/ պարբերության պահանջները:
2	26	ՈՒԱՁ 23632 Պատրիոտ և մողիֆիկացյաները	8000000	

**Անձ ծավալի պարունակող ապրանքների և ծառայությունների միավորի գները ներկայացված են կից Հավելված 1-ով:**


**ԿՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***

ՀՀ դրամ

Ձ/հ	Գնման ենթակա ծառայությունների անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
23	ՈՒԱՁ-31512 Լմողիֆիկացյաները	50111130/ 524 /9/1	
26	ՈՒԱՁ 23632 Պատրիոտ և մողիֆիկացյաները	50111130/ 528/9/1	

**ԳՆՈՐԴ**  
ՀՀ պաշտպանության նախարարություն  
ՀՀ ՊՆ, ԼՏԱ ղեկավարամեմեդի պետ  
  
Ն. ՅՈՒԶՅԱՆ

տնօրեն

**ՎԱՆԱՈՂ**  
«Ֆլեշ-Մոտորս» ՍՊԸ  
  
Ա. ԼԱԼՈՅԱՆ

**Հավելված 1**

Հ/հ	Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման աշխատանքների անվանումները	Չափ. միավ	ՌԲԱԶ-31512 և մոդիֆիկացյալները	ՌԲԱԶ 23632 Պատրիտ և մոդիֆիկացյալները
			Միավորի գինը ՀՀ դրամ	Միավորի գինը ՀՀ դրամ
1	Բոնկման համակարգի ստուգում	հատ	անվճար	անվճար
2	Կցորդման համակարգի ստուգում	հատ	անվճար	անվճար
3	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	հատ	անվճար	անվճար
4	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	հատ	անվճար	անվճար
5	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	հատ	անվճար	անվճար
6	Գեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	հատ	անվճար	անվճար
7	Շարժիչի հանում և տեղադրում	հատ	40000	40000
8	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում	հատ	55000	65000
9	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	հատ	0	65000
10	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	հատ	20000	40000
11	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	հատ	20000	30000
12	Շարժիչի գլխիկի փակամների փոխարինում հղկումով և խտաբուկեբով	հատ	20000	20000
13	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	հատ	5500	5500
14	Շարժիչի փակամների զսպանակների փոխարինում	հատ	550	550
15	Փակամների խցուկների փոխարինում	1 կ-տ	33000	35000
16	Հրիչների կամ հիդրոմիդիների փոխարինում	հատ	11000	30000
17	Շարժիչի միսցաօղերի, հիմնական և շարժաքևի ներդրակների փոխարինում	1 կ-տ	55000	65000
18	Ծնկած և լիսեռի հղկում	հատ	0	12000
19	Ծնկած և լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	հատ	0	16500
20	Ծնկած և լիսեռի ներդրակների փոխարինում	1 կ-տ	0	11000
21	Ծնկած և լիսեռի առամանախիվի փոխարինում	հատ	0	1100
22	Ծնկած և լիսեռի ուղղում	հատ	0	16500
23	Ծնկած և լիսեռի առջևի խցուկի փոխարինում	հատ	0	6000
24	Ծնկած և լիսեռի հետևի խցուկի փոխարինում	հատ	15000	15000
25	Շարժիչի բլոկի փոխարինում	հատ	0	44000
26	Շարժիչի գլանի փոխարինում (ГЛАЗОВКА)	հատ	0	11000
27	Մլսոցի փոխարինում 1 հատ	հատ	0	1100
28	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	18000
29	Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	15000
30	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	հատ	0	0
31	Փոկամիվի փոխարինում	հատ	1100	6000
32	Շարժիչի աստանավոր փոկի փոխարինում	հատ	0	0
33	Շարժիչի շղթայի փոխարինում	հատ	11000	35000
34	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	հատ	6000	6000
35	Շարժիչի քարտերի փոխարինում,	հատ	5500	5500
36	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	հատ	3000	3000
37	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	հատ	6600	6600
38	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	հատ	1100	1100
39	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	հատ	3300	6000

40	Շարժիչի յուղի մոխի մաքրում	հատ	1100	1100
41	Շարժիչի յուղի ռադիատորի փոդրակի փոխարինում	հատ	3300	4000
42	Յուղի ծորակի փոխարինում	հատ	2200	4000
43	Օդաքաշակ փողոսակի փոխարինում	հատ	1100	1100
44	Բ/խսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	3300	10000
45	Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում	հատ	2200	2200
46	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	2200	2200
47	Թափանիվի առանցքակալի փոխարինում	հատ	2000	2000
48	Շարժիչի կափույրի փոխարինում	հատ	2200	2200
49	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	հատ	2200	2200
50	Շարժիչի շարժարեկի փոխարինում	հատ	0	2200
51	Մխոցային օղակների փոխարինում	1 կ-տ	0	11000
52	Մտամնանիվի փոխարինում	հատ	1100	1100
53	Մտամնանիվի փոկի փոխարինում	հատ	0	0
54	Մտամնավոր փոկի պատյանի փոխարինում	հատ	0	0
55	Սուխարիկ փոխարինում	1 կ-տ	3000	3000
56	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	հատ	5500	5500
57	Շարժիչի փոկի հողմակի փոխարինում	հատ	2000	4000
58	Շարժիչի փոկի հողմակի առանցքակալի փոխարինում	հատ	2000	2000
59	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	հատ	11000	11000
60	Շարժիչի յուղի արանքաշափիչի (Բցտ) իրանի փոխարինում	հատ	1100	1100
61	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	հատ	5000	5000
62	Շարժիչի փոկի ձգիչի նորոգում	հատ	1000	1000
63	Շարժիչի գամասեռի փոխարինում	հատ	1500	1500
64	Շարժիչի գամասեռի փոխարինում բնիկի նորոգումով	հատ	2000	2000
65	Գլխիկի հեղույսի փոխարինում	հատ	1100	1100
66	Ծնկածև լիսեռի հեղույսի փոխարինում	հատ	1100	1100
67	Շարժիչի էլեկտրական հանակարգի հանում տեղադրում	հատ	2200	2200
68	Շարժիչի վառելիքի սնման հանակարգի հանում տեղադրում	հատ	5500	5500
69	Շարժիչի քիմիական լվացում	հատ	6000	6000
70	Բաշխիչ լիսեռի նորոգում /վառնի տեղադրում/	հատ	30000	30000
71	Ծնկածև լիսեռի կարգավորող տավողակի տեղի նորոգում	1 կ-տ	5000	5000
72	Կափյուրների եղկում	հատ	1500	1500
73	Կափյուրի բնիկի նորոգում /զնեզոս/	հատ	2200	6000
74	Պարագիտ լիսեռի եղկում և վառնի տեղադրում	հատ	10000	10000
75	Շրջանակի ուղղում, նորոգում	հատ	50000	50000
76	Զսպանի թերթիկի փոխարինում	հատ	20000	20000
77	Չսպանի թերթիկի փոխարինում	հատ	1200	1200
78	Յուղի և յուղի գոխի փոխարինում	հատ	1200	1200
79	Ավտոմեքենայի յուղում	հատ	0	5000
80	Համակարգչային ախտորոշում	հատ	3000	3000
81	Յուղի ռադիատորի փոխարինում	հատ	3000	3000
82	Յուղի ռադիատորի նորոգում	հատ	3000	3000
83	Վառոցքի մոմի փոխարինում	1 կ-տ	1700	1700
84	Վառելիքի նուրբ մաքրման գոխի փոխարինում	հատ	700	700
85	Օդի գոխի փոխարինում	հատ	700	700
86	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	1700
86	Օդի ծախսաչափիչի ռետինե խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	700

87	Օդի գոյիջի փողրակի հանում և տեղադրում	հատ	500	500
88	Կարբյուրատորի փոխարինում կամ հանում տեղադրում	հատ	3000	0
89	Կարբյուրատորի վերանորոգում	հատ	10000	0
90	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	1 կ-տ	0	10000
91	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	1 կ-տ	0	10000
92	Բոցամուղի կողավորում	1 կ-տ	0	1000
93	Ինժեկտորի բոցամուղի խտարուկերի փոխարինում	1 կ-տ	0	10000
94	Բենզամոդիջի փոխարինում	հատ	2500	10000
95	Վառելիքի կոշտ մաքրման գոյիջի փոխարինում	հատ	1700	10000
96	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	2500	2500
97	Բռնկման կարգավորում	հատ	2500	2500
98	Գեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	2500
99	Գեկավարման բլոկի վերանորոգում	հատ	0	20000
100	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	5500	6000
101	Վառելիքի բաքի մաքրում	հատ	3000	3000
102	Օդի ծախսի սովիջի փոխարինում	հատ	0	1700
103	Ջրի քերմաստիճանի սովիջի փոխարինում	հատ	1100	2000
104	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	հատ	2000	2000
105	Բենզոգրաքի բենզամոդիջի ցանցի փոխարինում	հատ	0	10000
106	Բենզոգրաքի բենզամոդիջի ցանցի մաքրում	հատ	0	500
107	Յուղի ճնշման սովիջի փոխարինում	հատ	1100	2000
108	Տվիջի փոխարինում	հատ	1100	1100
109	Ակսիլատորի փոխարինում կամ նորոգում	հատ	2200	3000
110	Օդազտիջի իրանի փոխարինում	հատ	2000	2000
111	Պացոսի ճոպանի փոխարինում կամ նորոգ.	հատ	3000	0
112	Հովհարի փոխարինում	հատ	2200	3300
113	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	3300	4000
114	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	5500	8000
115	Ռադիատորի նորոգում	հատ	10000	10000
116	Շերտափեղկի փոխարինում	հատ	3000	3000
117	Շերտափեղկի կառավարման ձգաձողի փոխարինում	հատ	3000	3000
118	Ընդարձակող բաքի փոխարինում	հատ	1100	1700
119	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	հատ	1100	1700
120	Ջրի ծորակի փոխարինում	հատ	1100	2500
121	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	հատ	2000	2000
122	Հովհարի շարժիջի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	10000
123	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	հատ	12000	12000
124	Վառարանի ռադիատորի նորոգում	հատ	3000	3000
125	Վառարանի շարժիջի փոխարինում	հատ	5500	12000
126	Ջեռուցիջի էլ.ծորակի փոխարինում	հատ	0	2500
127	Ջեռուցիջի իրանի փոխարինում	հատ	2200	12000
128	Թերմոստատի փոխարինում	հատ	3000	3000
129	Ջրի մոդիջի փոխարինում միջադիրով	հատ	6600	10000
130	Ջրի մոդիջի միջադիրի փոխարինում	հատ	1100	1100
131	Գենեյատորի փոկի փոխարինում	հատ	3300	4000

132	Գեներատորի փոկի ձգող հողովակի փոխարինում	հատ	0	4000
133	Ջրի ռադիատորի վերանորոգում	հատ	10000	10000
134	Թերմոստատի միջադիրի փոխարինում	հատ	3000	3000
135	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	3500	3500
136	Խլարարի խողովակի փոխարինում	հատ	3500	3500
137	Խլարարի անուրի (xamyr) փոխարինում	հատ	1000	1000
138	Խլարարի ներքի փոխարինում	հատ	1500	1500
139	Խլարարի կախացի փոխարինում	հատ	1000	1000
140	Հովացման հեղուկի փոխարինում	հատ	3000	3000
141	Դիֆուզորի փոխարինում	հատ	2200	10000
142	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	3000	3000
143	Աշխատանքային կամ գլխ. գլանի նորոգում	հատ	1500	1500
144	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	հատ	35000	35000
145	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	2200	3000
146	Կցորդման ոտնակի կարգավորում	հատ	1500	1500
147	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0
148	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	2000	2000
149	Կցորդման երկժանի փոխարինում	հատ	2000	2000
150	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	հատ	35000	35000
151	ՓՏ-ի հավաքածույի փոխարինում	հատ	5500	5500
152	ՓՏ-ի առջևի խոտարակի փոխարինում	հատ	2200	2200
153	ՓՏ-ի հետևի խոտարակի փոխարինում	հատ	0	0
154	ՓՏ-ի հանում և տեղադրում	հատ	12000	12000
155	ՓՏ-ի քանդում, արատավորում, հավաքում	հատ	12000	12000
156	ՓՏ-ի պատյանի փոխարինում	հատ	5500	5500
157	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	հատ	3300	3300
158	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	հատ	5500	5500
159	ՓՏ-ի ատամնաեկվի փոխարինում	հատ	3300	3300
160	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	հատ	5500	5500
161	ՓՏ-ի առաջնային լիսեռի առանցքակալի փոխարինում	հատ	5500	5500
162	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	հատ	5500	5500
163	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	հատ	3300	3300
164	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	հատ	2000	3300
165	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	հատ	2200	3000
166	ՓՏ-ի յուղի փոխարինում	հատ	1500	1500
167	Վազբաչափի շարժաբերի փոխարինում	հատ	2200	0
168	Փոխարկման մեխանիզմի կապրոնների փոխարինում	հատ	1100	1500
169	Կցորդման եղանի փոշեթիկնոցի փոխար.	հատ	2000	2000
170	Կցորդման կարգավորում	հատ	1500	1500
171	Կցորդման ոտնակի կարգավորիչ տափողակների փոխարինում	հատ	2200	3000
172	Կցորդման գլխավոր գլանի հեղուկի տարայի փոխարինում	հատ	1100	1200
173	Փոխանցումը կարգավորող ձողի փոխար.	հատ	3000	3000
174	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում	հատ	35000	35000
175	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	11000	11000
176	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում	հատ	12000	12000

177	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	հատ	5500	5500
178	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	հատ	5500	5500
179	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	հատ	5500	5500
180	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	հատ	3300	3300
181	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	հատ	3300	3300
182	Բաշխիչ տուփի երկժանիի փոխարինում	հատ	3300	3300
183	Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում	հատ	3300	3500
184	Բաշխիչ տուփի խտարուկի փոխարինում	հատ	3300	3300
185	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	հատ	3300	3300
186	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	2500	2500
187	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	հատ	2500	2500
188	Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում	հատ	5000	5000
189	Բաշխիչ տուփի կալումակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	3300	4000
190	Կարդանային լիսեռի միջ. կախացի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0
191	Կարդանի հեղույսի փոխարինում	հատ	550	1500
192	ԲՏ-ի ելուստի փոխարինում /ֆլանեց/	հատ	3300	3300
193	ԲՏ-ի արգելակման թմբուկի փոխարինում	հատ	3300	3300
194	ԲՏ-ի արգելակման թմբուկի կոճղակների փոխարինում	1 կ-տ	5500	5500
195	ԲՏ-ի արգելակման թմբուկի կոճղակների կարգավորում	1 կ-տ	1500	1500
196	ԲՏ-ի արգելակման աշխատանքային զլանի փոխարինում	հատ	3300	3300
197	Առջևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	27500	27500
198	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ռեդուկտոր) քանդում, արատավորում և հավաքում	հատ	12000	12000
199	Առջևի կամրջակի կիսատնու հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	6000	6000
200	Առջևի կամրջակի կիսատնու առանցքակալի խտարուկերի փոխարինում	1 կ-տ	2200	2200
201	Կամրջակի յուղի փոխարինում	հատ	1100	1100
202	Առջևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	8800	8800
203	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	հատ	3300	3300
204	Հետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	16500	16500
205	Հետևի կամրջակի լիակատար քանդում, արատավորում և հավաքում	հատ	33000	33000
206	Հետևի կամրջակի կիսատնու հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	2500	2500
207	Հետևի կամրջակի կիսատնու առանցքակալի փոխարինում	հատ	3000	3000
208	Հետևի կամրջակի կիսատնու առանցքակալի խտարուկերի փոխարինում	1 կ-տ	2200	3000
209	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	հատ	5500	5500
210	Առջևի կիսատնիները միացնող ազույցի փոխարինում	հատ	5000	5000
211	Առջևի կամրջակի շրջադարձի բռունցքի փոխարինում	հատ	8000	8000
212	Առջևի կամրջակի շրջադարձի գնդաձև հենակի փոխարինում	հատ	18000	18000
213	Տանող կցաշուրթի փոխարինում	հատ	3300	4000

214	Սասնեխտնեքի հավաքման իրանի և սոնիի փոխարինում	1 կ-տ	5500	5500
214	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0
215	Չախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	5500	18000
216	Առջևի անվակումոդի առանցքակալի փոխարինում	հատ	5500	6000
217	Առջևի անվակումոդի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	5500	5500
218	Հետևի անվակումոդի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0
219	Հետևի անվակումոդի առանցքակալի փոխարինում	հատ	0	0
220	Անվակումոդի գամասեղի և հեղուսի փոխարինում(մեկ անիվի համար)	հատ	1200	1200
221	Չախ կամ աջ հողակապի խտարուկերի փոխարինում	հատ	3300	18000
222	Չախ կամ աջ հողակապի նորոգում	հատ	2000	2000
223	Չախ կամ աջ հողակապի փոշեթիկնոցի փոխարինում	հատ	3300	18000
224	Շկվորնու փոխարինում	հատ	16500	18000
225	Ռեզրավոյի փոխարինում	հատ	16500	18000
226	Շոճանակային լծակի վռանի փոխարինում	1 կ-տ	0	0
227	Շոճանակային լծակի փոխարինում	հատ	0	0
228	Շոճանակային լծակի կալումակի փոխարինում	հատ	0	0
229	Յնցամեղմիչի թասակի փոխարինում	հատ	0	0
230	Առջևի զսպանակի փոխարինում	հատ	0	3500
231	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	1500	1500
232	Հարվածամեղմիչի վռանների փոխարինում	հատ	1500	1500
233	Մեղմիչի ամրացման կալումակի փոխարինում	հատ	2000	2000
234	Մեղմիչի երկաթե համաձուլվածքով վռանի փոխարինում	հատ	0	0
235	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0
236	Ներքևի լծակի վռանների փոխարինում	1 կ-տ	0	0
237	Ներքևի լծակի հեղուսի փոխարինում	հատ	0	0
238	Հարվածիչի (բարձիկի փոխարինում)	հատ	1500	1500
239	Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0
240	Վերևի լծակի վռանների փոխարինում	1 կ-տ	0	0
241	Վերևի լծակի հեղուսի փոխարինում	հատ	0	0
242	Գնդե հողակապերի պատյանի փոխարինում	հատ	0	0
243	Գնդե հողակապի փոխարինում	հատ	0	0
244	Կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	4500
245	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	1 կ-տ	0	4500
246	Հետևի կայունարարի վռանների փոխարինում	հատ	0	4500
247	Կայունարարի կալումակի փոխարինում	հատ	0	1500
248	Հետևի զսպանակների փոխարինում	հատ	0	0
249	Հետևի ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0
250	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	0	0
251	Չսպանի փոխարինում	հատ	6000	6000
252	Չսպանի վռանների փոխարինում	1 կ-տ	1100	3000
253	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	հատ	1500	1500
254	Հետևի հարվածամեղմիչի վռանների փոխարինում	1 կ-տ	1500	1500
255	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	1 կ-տ	0	0
256	Չսպակի մետաղական վռանների փոխարինում	հատ	3000	3000

257	Ստրումյանի փոխարինում	հատ	2000	2000
258	Զսպանի ականջողի փոխարինում	հատ	2000	2000
259	Զսպանի ականջողի հեղույսի փոխարինում	հատ	2000	2000
260	Զսպանակի մեկուսացնող ռետինե միջադիրի փոխարինում	1 կ-տ	0	5000
261	Անվակունդի առանցքակալների բացակի կարգավորում	հատ	1100	2000
262	Ղեկասյունակի հիմնական նորոգում	հատ	18000	18000
263	Ղեկասյունակի արորիկի փոխարինում	հատ	5500	18000
264	Ղեկասյունակի առանցքային տնու փոխարինում	հատ	1100	18000
265	Ղեկասյունակի խաչուկների փոխարինում	հատ	2200	6000
266	Ղեկասյունակի վերանորոգման հավաքածույի փոխարինում	1 կ-տ	5500	18000
267	Ղեկասյունակի քանրում, արատավորում, հավաքում	հատ	18000	18000
